ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՎԱՎԵՐԱՑՄԱՆ ԿԱՄ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև երկկողմ հարաբերություններն արդյունավետ զարգանում են վերջին տարիներին: Հայաստանը շահագրգռված է ընդլայնել և խորացնել Սինգապուրի հետ համագործակցությունը տարբեր բնագավառներում, ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Սինգապուրի նման տնտեսապես և տեխնոլոգիապես առաջադեմ երկրի հետ ազատ առևտրի հնարավորության ստեղծումը գործընկերային լայն ասպարեզ է բացում Հայաստանի համար: Սինգապուրի հետ շփումների ակտիվացումն առաջընթաց քայլ է ՀՀ արտաքին քաղաքականության ասիական ուղղության զարգացման տեսանկյունից:

Հանդիսանալով Եվրասիական տնտեսական միության անդամ՝ Հայաստանի համար էական նշանակություն ունի ԵԱՏՄ-ի և երրորդ երկրների միջև առևտրատնտեսական կապերի և համագործակցության ընդլայնումը: Այս համատեքստում 2019թ. հոկտեմբերի 1-ին ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև համապարփակ տնտեսական համագործակցության մասին» շրջանակային համաձայնագիրը և «Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Սինգապուրի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրն ուրվագծում են Հայաստանի և Սինգապուրի փոխհարաբերությունների զարգացման ուղղությունները, բովանդակությունն ու խորությունը: Ազատ առևտրի համաձայնագիրն իր մեջ ներառում է ապրանքների առևտուր, սակայն չի պարունակում դրույթներ ծառայությունների առևտրի և ներդրումների վերաբերյալ և այդ բնագավառները համապարփակ կարգավորելու նպատակով Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի միջև ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագիրը: ԵԱՏՄ անդամ պետություններից Հայաստանն առաջինն է, որ Սինգապուրի հետ ստորագրել է ծառայությունների առևտրի և ներդրումների մասին համաձայնագիր: Վերջինս հայ-սինգապուրյան հարաբերությունների զարգացման կարևորագույն բաղադրիչ է և մյուս երկու բազմակողմ համաձայնագրերի հետ միասին շահավետ պայմաններ է ստեղծում երկկողմ ուղղակի և անուղղակի տնտեսական շփումների և առևտրաշրջանառության

ու ներդրումների ծավալների ավելացման տեսանկյունից: Համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը անհրաժեշտ խթան կհանդիսանա հայ-սինգապուրյան առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման համար՝ դրանք բարձրացնելով որակապես նոր մակարդակի: Համապատասխան իրավապայմանագրային դաշտի առկայությունը կնպաստի ՀՀ-ի՝ որպես ԵԱՏՄ անդամ երկրի նկատմամբ սինգապուրյան հետաքրքրվածության և համագործակցության հնարավորությունների ավելացմանը: Հայաստանը հնարավորություն կստանա ոչ միայն ուղղակիորեն զարգացնել տնտեսական կապերը Սինգապուրի հետ, այլև կարող է տարանցիկ ուղի դառնալ Սինգապուրի համար՝ վերջինիս կողմից տարածաշրջանային և եվրոպական շուկաներ առավել դյուրին կերպով ներթափանցելու տեսանկյունից:

Ելնելով վերոգրյալից՝ 2019թ. հոկտեմբերի 1-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Սինգապուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրի վավերացումը կամ հաստատումը Հայաստանի Հանրապետության վարած արտաքին քաղաքականության առումով նպատակահարմար է:

ՀՀ արտաքին գործերի
նախարարի տեղակալ

Ավետ Ադոնց